

53. ԺՈՂՈՎՈՒՐԴ ՈՒ ՓԱՇԵՆ

Փաշե մե շատ զալըմ, գուպող-շուպող, կըրծ ուտող կէղնի, ժողովուրդ գանգատ կէնե մեծ տեղ, մութաֆիշ գիկա օր քնքնե՝ չիմնա բանն ի՛նչ է:

Ժողովուրդ՝ մեծ ու պզտիկ, մարդ ու կնիկ, ՚լը քոմին մեկտես, կը բոռան ու կը ճվան.

— Ձընք չո՛ւզի, չընք չո՛ւզի:

Գուրխուկ պառավ մե էն դիուց գիկա, կը խառնվի հըտ ժողովրդին, կը բոռա.

— Ձընք չո՛ւզի, չընք չո՛ւզի:

Մութաֆիշ կը հարցու.

— Պա՛ռավ, իդոնք չըմեն դարդ մե ունին, օր կը բոռան «չընք չուզի», դու չորի՛ն կըսիս «չընք չուզի», քըզի՞ ի՛նչ դարդ կա:

Պառավ կըսե.

— Յըմեն կըսին «չընք չուզի», ե՛ս լե կըսեմ «չընք չուզի»:—  
Ձըմ դինա ինչ դավի է, մինակ իդա խըդար գիսամ, ՚ր ժողովուրդ զուր տեղ չըսե «չընք չուզի»:

Փաշեն աղյ կէղնի:

